

*«Վարձարկային գործող ֆինանսական հաստատություններին
Ձեռնարկատիրությանը զբաղվող քաղաքացիներին և կազմակերպություններին
Այլ շահագրգիռ անձանց*

Վերլուծություն

Արտաքուստ գրավիչ պայմաններով բիզնես առաջարկների միջոցով խարդախության սխեմաների վերաբերյալ

1. Նախաբան

Արդի աշխարհում գլոբալացման շարունակական միտումները և կապի ու հաղորդակցության միջոցների (հատկապես՝ ինտերնետի) աննախադեպ զարգացումը մի շարք հնարավորություններ ընձեռելուց բացի երևան են բերել էական ռիսկեր, այդ թվում՝ այնպիսիք, որոնք կապված են արտաքուստ գրավիչ պայմաններով բիզնես առաջարկների միջոցով խարդախության տարատեսակ սխեմաների հետ:

Նման սխեմաները հիմնականում իրագործվում են մարդկանց անտեղյակությունից օգտվելու և/կամ վստահությունը չարաշահելու, արագ ու մեծ եկամուտների հնարավոր ստացման վերաբերյալ ակնկալիքներ ստեղծելու միջոցով տնտեսական գործունեության տեսանկյունից «խոստումնալից», սակայն իրականում ոչ խելամիտ և, որպես կանոն, ոչ շահավետ գործառնությունների մեջ ներգրավելու, գոյություն չունեցող կամ քիչ հավանական բիզնես հնարավորությունները որպես իրական ներկայացնելու եղանակով:

Գրավիչ պայմաններով բիզնես առաջարկներով կարող են հանդես գալ ինչպես ֆիզիկական անձինք՝ որպես անհատ ձեռնարկատեր, միջնորդ կամ փորձագետ, այնպես էլ իրավաբանական անձինք՝ ավելի հաճախ առաջատար եվրոպական կամ այլ երկրներում գրանցված միջնորդական կամ խորհրդատվական ընկերություններ (հետայսու պայմանականորեն՝ Միջնորդ):

Միջնորդի դերում հանդես եկող ֆիզիկական անձանց համար, որպես կանոն, բնութագրական է հանրամատչելի/ հրապարակային աղբյուրներում նրանց մասին որևէ, այդ թվում՝ դրական բնույթի տեղեկատվության բացակայությունը, իսկ հաճախ նաև՝ բացասական բնույթի տեղեկատվության առկայությունը¹, իրենց անձի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու և գործունեությանը լրացուցիչ գրավչություն հաղորդելու նպատակով հայրենական ու օտարերկրյա հայտնի

¹ Օրինակ՝ նախկինում խարդախության տարատեսակ սխեմաներում ներգրավված/ նկատված լինելը, քրեական անցյալը, որոշակի գործարար շրջանակներում արատավորված համբավ ունենալը և այլն:

քաղաքական, հասարակական ու տնտեսական գործիչների հետ անձնական կամ գործնական կապերի մասին պարբերական հիշատակումները, դրանք «ապացուցող» տարբեր հանգամանքների (հանդիպումների, միջոցառումների, ծանոթությունների, փոխադարձ պարտավորությունների) վկայակոչումը, իբրև թե սոցիալական բարձր կարգավիճակի մասին վկայող պարագաների² ցուցադրական օգտագործումը և համապատասխան վարվելակերպի դրսևորումը³:

Միջնորդի դերը ստանձնած իրավաբանական անձանց համար բնութագրական է արժանահավատ ֆինանսական հաշվետվությունների, գործունեության շրջանակի ու ծավալների, սեփականատերերի ու ղեկավարների մասին հավաստի և լիարժեք տվյալների անհասանելիությունը, քիչ թե շատ կայացած կազմակերպության համար արդի աշխարհում գրեթե պարտադիր վիրտուալ ներկայացվածության, մասնավորապես՝ բովանդակային ու ձևավորման առումով պատշաճ ինտերնետային կայքէջի, առաջնային դոմեյնի, դրանում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեների⁴ բացակայությունը:

2. Խարդախության սխեմաների իրագործման օրինակներ

Ստորև ներկայացված են արտաքուստ գրավիչ պայմաններով բիզնես առաջարկների միջոցով խարդախության սխեմաների իրագործման օրինակներ, որոնց վերջնական նպատակը ֆիզիկական անձանց և կազմակերպությունների օրինական ֆինանսական միջոցները հաճախ առաջին հայացքից «օրենքով չարգելված» միջոցներով հափշտակելն է:

Ա) Փորձագիտական ուսումնասիրություն, համատեղ ձեռնարկատիրական գործունեություն

Միջնորդը հայաստանյան գործարարներին կամ կազմակերպություններին առաջարկում է մշակել բիզնես ծրագիր՝ արտասահմանից խոշոր ներդրումների ներգրավման նպատակով: Իր առաջարկը հիմնավորելու համար Միջնորդը սովորաբար ներկայացնում է հղման նյութերի բավական ծավալուն փաթեթ (ավելի հաճախ՝ էլեկտրոնային տեսքով), որը ներառում է տեղեկատվություն նրա ծառայություններից նախկինում օգտված (և, բնականաբար, հաջողության հասած)

² Ինչպիսիք են, օրինակ, գեղեցիկ ձևավորմամբ բարձրորակ տպագրության բիզնես քարտերը, անձնական պերճանքի առարկաները (թանկարժեք ժամացույցներ, գրիչներ և այլն):

³ Օրինակ՝ խիստ զբաղվածության պատճառով ժամանակի սղության վերաբերյալ դիտարկումները և այլն:

⁴ Ի հակադրություն, օրինակ, gmail.com, hotmail.com, yahoo.com, mail.ru և նմանատիպ այլ հանրամատչելի դոմեյններում գրանցված հասցեների:

հաճախորդների լայն կազմի ու աշխարհագրական սփռվածքի⁵, հետաքրքրության առարկա ոլորտներում տնտեսական իրավիճակի ու հնարավոր եկամտաբեր ներդրումների մասին տարատեսակ վերլուծությունների, ներդրումների ապահովման տարբեր միջոցների ու գործիքների վերաբերյալ, միաժամանակ չներկայացնելով քիչ թե շատ բովանդակալից մանրամասներ՝ դա պատճառաբանելով հաճախորդի «առևտրային գաղտնիքով» կամ այլ հանգամանքներով:

Համապատասխան ներդրող գտնելու համար որպես անհրաժեշտ նախապայման Միջնորդն առաջարկում է իրականացնել համակողմանի փորձագիտական ուսումնասիրություն⁶, որի համար հայաստանյան ընկերության հետ կնքվում է առանձին պայմանագիր: Վերջինս սահմանում է Միջնորդի մասնագետների կողմից համակողմանի ուսումնասիրության իրականացման պայմանները (ժամկետը, արժեքը, վերջնական արդյունքը) և, որ ամենակարևորն է, սովորաբար պարունակում է դրույթ այն մասին, որ ուսումնասիրության իրականացմամբ Միջնորդն ուղղակիորեն չի ստանձնում և/կամ երաշխավորում հետագայում ներդրողների ներգրավման որևէ պարտավորություն:

Փորձագիտական ուսումնասիրության իրականացման համար նախատեսված վճարումները հայաստանյան գործընկերոջ կողմից կատարվելուց հետո Միջնորդի մասնագետը ժամանում է Հայաստան, իրականացնում պատվիրատուի բիզնեսի ուսումնասիրությանն ուղղված՝ այս կամ այն աստիճանի բովանդակալից քայլեր և որոշ ժամանակ անց ներկայացնում հաշվետվություն: Շատ հաճախ, հաշվետվությամբ ամրագրվում է, որ համակողմանի ուսումնասիրություն իրականացնելու համար պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի կամ ոչ լիարժեք են, կամ՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելուց հետո պարզվում է, որ ընկերության կողմից ծավալվող տնտեսական գործունեության ցուցանիշները չեն բավարարում կամ ոչ լիարժեք են բավարարում պոտենցիալ ներդրողներ ներգրավելու համար անհրաժեշտ նախապայմաններին և այլն: Վերջին հաշվով, պատվիրատուն վճարում է մի գործողության համար, որի դիմաց որևէ իրական ներդրումներ/ ֆինանսական ներհոսք երբևէ տեղի չի ունենում:

Որպես վերը նկարագրված սխեմայի տարատեսակ՝ Միջնորդը կարող է առաջարկել համակողմանի փորձագիտական ուսումնասիրությունն իրականացնել համատեղ ձեռնարկատիրական գործունեության ձևաչափով, որում հայաստանյան ընկերության մասնակցությունն արտահայտվում է այդ ուսումնասիրության համար անհրաժեշտ ծախսերի (մեկ այլ դեպքում՝ համատեղ ձեռնարկության գործարկման

⁵ Հաճախ հղում կատարելով աշխարհահռչակ ընկերությունների/ ապրանքանիշերի կամ, հակառակը, որևէ կոնկրետ անուն չնշելով:

⁶ Միջազգայնորեն օգտագործվող տերմինը՝ formal due diligence:

սկզբնական ծախսերի) ֆինանսավորմամբ, իսկ Միջնորդի մասնակցությունը՝ հետագայում պոտենցիալ ներդրողների ներգրավմանն ուղղված քայլերի ձեռնարկմամբ: Ըստ վերը շարադրվածի տրամաբանության՝ հայաստանյան կողմի «մասնակցության» գումարը ստանալուց և համատեղ գործունեության առերևույթ պատկերն ստեղծելուն ուղղված որոշակի գործողություններից հետո Միջնորդը, որն ի սկզբանե որևէ երաշխիք չէր տվել ձեռնարկի հաջող իրագործման համար, տարբեր պատճառների վկայակոչմամբ հրաժարվում է հետագա համագործակցությունից:

F) Տնտեսական զարգացման ծրագրերի իրականացում

Միջնորդը գրավոր կամ էլեկտրոնային փոստով, հաճախ նաև՝ անձնական կապերի ու ծանոթությունների միջոցով հայաստանյան (պետական) գերատեսչություններին, խոշոր ձեռնարկություններին, հասարակական ու տնտեսական գործունեությամբ զբաղվող կառույցներին կամ ուղղակի հայտնի, հանրության լայն շրջանակներում հեղինակություն վայելող անձանց ներկայացնում է Հայաստանում տնտեսական զարգացման/վերակառուցման, ենթակառուցվածքային ներդրումների, ոլորտային բարեփոխումների, սոցիալական օժանդակության ու համանման այլ մեծածավալ ծրագրերի իրականացման կամ ֆինանսավորման առաջարկ: Ընդ որում, խոսքը գնում է երկարաժամկետ, հաճախ՝ փոխհատուցում չենթադրող ծրագրերի մասին, հղում կատարելով նախաձեռնողների բացառապես մարդասիրական մղումներին, Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ հատուկ «ջերմ» վերաբերմունքին, տարածաշրջանային զարգացման առաջնահերթություններին և համանման այլ հնչեղ գաղափարների:

Որպես ծրագիրը սկսելու նախապայման կամ, ինչպես հաճախ ներկայացնում է Միջնորդը, ծրագիրն իրականացնելու պատրաստակամության դրսևորում՝ Միջնորդը հետաքրքրված հայկական կողմին առաջարկում է իր ներկացուցիչներին պաշտոնապես հրավիրել Հայաստան (մեկ այլ դեպքում՝ պաշտոնական ձևաթերթի վրա ստորագրված հետ վերադարձնել մտադրությունների հուշագրի՝ իր կողմից ուղարկված տեքստը), իրավիճակին տեղում ծանոթանալու և պատկան մարմինների/պաշտոնատար անձանց հետ հանդիպումների միջոցով ծրագրի իրականացման մանրամասները քննարկելու նպատակով:

Հայաստան այցելելու դեպքում Միջնորդի ներկայացուցիչը, չմոռանալով շոսայլ խոստումներ տալ ծրագրի հաջող իրականացման դեպքում Հայաստանին սպասող բազմամիլիոնանոց ներդրումների մասին, փորձում է հնարավոր առավելագույն քանակի պետական ու մասնավոր կառույցներից և անձանցից ինչ-ինչ հիմնավորումներով ստանալ գրավոր հավաստիացումներ առ այն, որ վերջիններս իրեն վստահել են տարբեր ոլորտներում ներդրումների իրականացման համար

անհրաժեշտ միջոցների հայթայթման գործառույթը: Նշված հավաստիացումների ձևաչափը բազմազան է՝ որևէ պաշտոնյայի հետ հանդիպման ժամի մասին էլեկտրոնային նամակից մինչև բացառիկ իրավասություններով օժտված ներկայացուցչություն ապահովելու լիազորագիր, ինչը կախված է Միջնորդի համոզականությունից և հավաստիացումը տրամադրող կողմի դյուրահավատությունից:

Որպես նկարագրված սխեմայի տրամաբանական եզրափակում՝ Միջնորդը վերը նշված հավաստիացումները հետագայում սեփական հայեցողությամբ օգտագործում է երրորդ անձանց մոտ որպես իր արժանահավատության «ապացույց» ներկայացնելու, այսինքն՝ տրամադրողի առկա կամ ենթադրվող բարի համբավն օգտագործելու միջոցով խարդախության տարատեսակ սխեմաների իրականացման համար:

Գ) Երաշխիքի դիմաց արտոնյալ պայմաններով վարկավորում

Միջնորդը դիմում է հայաստանյան բանկերին (մեկ այլ դեպքում՝ վարկային կազմակերպությանը, ներդրումային կազմակերպությանը)՝ հավաստիացնելով, որ կարող է կազմակերպել բանկային (մեկ այլ դեպքում՝ ֆինանսական, բաժնետոմսերով ապահովված) երաշխիքի դիմաց արտասահմանյան խոշոր ներդրումային, վենչուրային, տրաստային հիմնադրամներից և համանման այլ աղբյուրներից ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ փոխառու միջոցների ներգրավումը: Իր առաջարկը համոզիչ դարձնելու համար Միջնորդը ներկայացնում է երաշխիքի թողարկման ու փոխառության տրամադրման պայմանագրերի տիպային օրինակներ⁷, հարակից «պաշտոնական» գրագրության առաջարկվող տեքստեր, միջոցների ներգրավման բազմաստիճան սխեմատիկ նկարագրեր և այլ «հիմնավորող» նյութեր:

Որպես նկարագրված սխեմայի տարատեսակ՝ Միջնորդը տրամադրվելիք երաշխիքի դիմաց որպես ապահովություն կարող է առաջարկել արտասահմանյան ընկերությունների կողմից թողարկված մուրհակներ, պարտավորագրեր կամ այլ արժեթղթեր (հաճախ՝ ոչ թե տպագիր տեսքով, այլ դրանց առկայության մասին ինչ-ինչ «իրավասու մարմինների» կամ պահառուների անունից ներկայացված հավաստագրերով), որոնք, եթե անգամ իսկությունը ստուգվելու դեպքում պարզվի, որ կեղծ չեն, պրակտիկապես որևէ արժեք չեն ներկայացնում՝ հաշվի առնելով դրանց թողարկողի ֆինանսական վիճակի ու փաստացի գործունեության վերաբերյալ հավաստի տեղեկատվության բացակայությունը:

⁷ Հիմնականում օտարալեզու՝ անգլերեն կամ ռուսերեն, մի շարք խրթին միջազգային տերմինների օգտագործմամբ, խիստ ընդհանուր/ անորոշ ձևակերպումներով:

Պոտենցիալ երաշխավորի մոտ հնարավոր կասկածները փարատելու նպատակով Միջնորդը կարող է առաջարկել այնպիսի սխեմա, որի դեպքում երաշխիքն իրեն առձեռն չի տրամադրվում, այլ երաշխիք տվող անձն ուղղակի պարտավորվում է դրա առկայության վերաբերյալ որևէ հարցում (ըստ Միջնորդի՝ պոտենցիալ վարկատուի կողմից) լինելու դեպքում դրական պատասխան տալ, ինչն իբրև թե նվազեցնում է տրամադրված երաշխիքը այլ նպատակների համար օգտագործվելու հավանականությունը, սակայն իրականում նույն հաջողությամբ ծառայում է Միջնորդի՝ երրորդ անձանց մոտ իր արժանահավատությունն «ապացուցելու» նպատակին:

Նկարագրված սխեմայի տարատեսակ է նաև այն դեպքը, երբ Միջնորդը հայաստանյան գործընկերոջից պահանջում է ոչ թե երաշխիք, այլ ընդամենը հավաստիացում առ այն, որ նրա մոտ ի պահ են տրվել արտասահմանյան (մեկ այլ դեպքում՝ հայկական) ընկերության կողմից թողարկված, անվանական մեծ արժեքով ինչ-որ մուրհակներ, պարտավորագրեր կամ այլ արժեթղթեր: Այս դեպքում հայաստանյան գործընկերը ֆորմալ առումով որևէ ֆինանսական ռիսկ չի ստանձնում, քանի որ հիշատակված արժեթղթերը, իրականում իրենցից որևէ արժեք չներկայացնելով հանդերձ, ֆիզիկապես գոյություն ունեն և նրա մոտ ի պահ են տրվել: Այդուհանդերձ, այս դեպքում ևս որևէ կերպ չեզոքացված չեն բարի համբավի էական ռիսկերը, քանի որ Միջնորդն ի վերջո հայաստանյան գործընկերոջ կողմից տրամադրված հավաստիացումը ծառայեցնում է վերջինիս անունն անուղղակիորեն շահարկելու միջոցով խարդախության տարբեր սխեմաների իրագործման նպատակին:

Դ) Ֆինանսական հոսքերի սպասարկում

Միջնորդը հայաստանյան գործարարներին կամ կազմակերպություններին առաջարկում է բացել բանկային հաշիվ(ներ)՝ հավաստիացնելով, որ դրանցով պետք է շրջանառեն ինչ-ինչ բիզնես գործառնությունների սպասարկմանն ուղղված ֆինանսական միջոցներ: Հայաստանյան գործընկերոջ «ծառայությունների» դիմաց առաջարկվում է որոշակի միջնորդավճար, իսկ բուն ծառայությունը կայանում է բանկային հաշիվ(ներ)ին ստացված գումարները Միջնորդի կողմից նշված շահառուներին փոխանցումն ապահովելու մեջ: Որպես ակնկալվող ֆինանսական հոսքերի իրավաչափության ապացույց՝ Միջնորդն իր հայաստանյան գործընկերոջը, իսկ վերջինս էլ՝ իր սպասարկող բանկին կարող է ներկայացնել համատեղ ձեռնարկատիրական գործունեության⁸, տնտեսական զարգացման ծրագրերի

⁸ Օրինակ՝ «Ա» ենթավերնագրի ներքո նկարագրված սխեմայի հատկանիշներով բնութագրվող:

իրականացման⁹ վերաբերյալ համաձայնագրեր, փոխատվության կամ վարկավորման պայմանագրեր, որոնց համար հաճախ բնութագրական են կեղծ/ շինծու¹⁰ պայմանագրերի հատկանիշները:

Հաշվի բացմանը կարող է հաջորդել հաճախորդի կողմից իր արտասահմանյան գործընկերներին որոշակի գումարների փոխանցումը, որի նպատակների շարքում, ի թիվս վերը նշված պայմանագրերից բխողների, կարող է նշվել տարատեսակ ներկայացուցչական, գործառնական ու այլ ծախսերի դիմաց փոխհատուցումը: Ընդ որում, փոխանցումները հաճախ կատարվում են Միջնորդի կողմից նշվող՝ համապատասխան պայմանագրերում չարտացոլված երրորդ անձանց հաշվեհամարներին (մեկ այլ դեպքում՝ արագ փոխանցումների համակարգով անհաշիվ փոխանցման միջոցով), ինչը հաճախորդը բացատրում է ենթադրվող բիզնես գործունեության որոշակի նրբություններով:

Որպես նկարագրված սխեմայի ավելի ընդհանուր դեպք՝ հայաստանյան գործընկերոջ հաշվով կարող են հաշվի բացմանը հաջորդող համեմատաբար կարճ ժամանակահատվածում կատարվել մեծածավալ ստացումներ և փոխանցումներ, որոնց տրամաբանական նպատակը մի կետից մյուսը ֆինանսական միջոցների հոսքի ապահովումն է՝ հաճախորդի համոզմամբ իրական կամ, հնարավոր է, ամբողջությամբ մտացածին ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում: Ընդ որում, հաճախորդը շատ դեպքերում չի տիրապետում ստացված գումարների ծագման աղբյուրի կամ փոխանցված գումարների իրական շահառու(ներ)ի վերաբերյալ ամբողջական ու հավաստի տեղեկատվության:

3. Եզրակացություն

Վերը նկարագրված սխեմաների հնարավոր առկայության վերաբերյալ եզրահանգման գալու նպատակով ֆինանսական հաստատությունները, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անհատ քաղաքացիներն ու կազմակերպությունները, երկրի հասարակական և տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում որոշումներ ընդունելու իրավասությամբ օժտված անձինք ցանկալի է, որ ուշադրություն դարձնեն այդ սխեմաների հայտնաբերման տեսանկյունից էական այնպիսի բնութագրիչների, ինչպիսիք են.

⁹ Օրինակ՝ «Բ» ենթավերնագրի ներքո նկարագրված սխեմայի հատկանիշներով բնութագրվող:

¹⁰ Որպիսիք նկարագրված են ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 18.04.12թ. թիվ 1/351Ա որոշմամբ հաստատված «Կեղծ և շինծու գործարքների (պայմանագրերի) միջոցով փողերի լվացումը» տիպաբանությամբ:

- Գրավիչ պայմաններով բիզնես առաջարկների խելամտությունն ու արժանահավատությունը, տվյալ ոլորտի գործարար պրակտիկային համապատասխանությունը.
- Նման առաջարկներով հանդես եկող անձանց գործարար կերպարը, հանրամատչելի և սահմանափակ հասանելիությամբ տեղեկատվական շտեմարաններում նրանց վերաբերյալ առկա տեղեկատվությունը.
- Առաջարկվող սխեմաներում արտասահմանյան (օֆշորային կամ այլ ռիսկային գոտիներում գտնվող) հաստատությունների/ ընկերությունների ներգրավվածությունը: